

Կը սիրեմ կարգաւ կորովի պատանիներու
եռանդուն գրութիւնները, որոնք վերապրող
կեանքերու խոստովանից հունձքեր են:

ՄԱՐԶԻԿԸ

Ուրախութեամբ կ'արձանագրէ իւր անդամա-
կից Պ. Մարգիսեան պատանւոյն յաղթանակը
վառնայի ազգային վազքերուն մէջ:

ՈՎԱՍՍՈ

Նուիրուած է այս ամսով Գաշնակցութեան
35ամեակին՝ զովասանական յօդուածներով:

ԱՐԻ

Կը նկարագրէ իր Ռումանական խումբերու
բարոյական առաքելութիւնը ի Պետարպիւս,
ուր թէ և մրցանքին մէջ յաղթուած են, սա-
կայն տեղացի հայութեան մէջ մեծ ոգևորութիւն
առաջ բերած են:

ՍՈՒՐԻԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ (Սասանդական բաժին)

Այս թերթը տխուր գրութիւն մը նուիրած է
անապատներու խորերը՝ դեռ տառապող հազա-
րաւորներու փրկութեան:

ՏՈՒՆ և ՊԱՏԱՆԵԿԱՆ ՇԱՐՈՒՄ

Խմորաւիպ թերթեր են: Լի պարզուկ գրու-
թիւններով:

ՓՈՒՆՋ

Մանուկներու կրթիչ հաճելի ընթերցումներ:

ԾԻԱԾԱՆ

Նուիրուած է անուս դասակարգին զարգաց-
ման համար, «Հայ դիցաբանութիւն» Գանթ
փիլիսոփան», «Երկրին փաղաքները (Ամասիա,
Այաս): Աշխարհիս ամէն կողմէն համառօտ գի-
տական և փաղաքական տեղեկութիւններ, ոչ
գերծ երբեք գիտական սխալներէ:

Դեռ կան շատ մը թերթեր, որոնց վրայ հա-
ճոյքով պիտի խօսէի, սակայն հոկտեմբերեան
թիւերը չունենալուս պատճառաւ, ստիպուեցայ
լռել:

Հ. Վ. ՅՈՎԱՆԵՍՅԱՆ

ԱՅԼԵԻՍԵԻՔ

ՍՏԵՓԱՆ ԷԼՄԱՍ

(Իւ Զնդեան 61թուրդ Գրեթեյնի ուղիւ)

Ժնեւի մէջ արուեստագէտ բարեկամ
Պ. Ստեփան Էլմաս այս կաղանդին կը
տօնէ իր ծննդեան վաթսուներմէկերորդ
տարեկալը: Իր կեանքը ծանօթ է հայ
հասարակութեան, քանի որ Պոլսոյ Ժո-
ղովորդի Զայնը և Անտիպը, ու այս տա-
րուան Թէոդիկի Ամենուն Տարեցոյցը բե-
րին ինծիմէ հակիրճ ծանօթութիւններ՝ հայ
նշանաւոր երգահանին մասին: Բազմապիկ
մէջ կ'ուզեմ խօսիլ անոր գործերուն կազ-
մին վրայ՝ քիչ մը աւելի մանրամասն:

Ստեփան Էլմաս մեր մէջ առաջինն է,
որ գիտցաւ զոտո եւրոպական ըլլալ, այն
իմաստով՝ զոր կ'ըմբռնենք երաժշտութեան
մէջ, Գանի որ ան անաւ եւրոպական միջնո-
ւորտին մէջ մեծ վարպետներու շուքին,
և առաւ հիմքը արեւմտեան, յետոյ զայն
իր անձին նկարագրովը շաղախելու:
Վասն զի Էլմասի նկարագիրը զօրաւոր
դրոշմ դրած է իր գործերուն, որոնք
հակառակ իրենց զուտ արեւմտեան նկա-
րագրին, էլմասեան աշ են:

Առաւելութիւնը Էլմասի մօտ, ուրիշ
հայ բոլորդիդեօրներու մէջ, կու գայ հե-
տեւաբար հեղինակին եւրոպական ճաշա-
կէն. բան մը՝ որ անոր հանճարին պատ-
ճառով քաջութիւնը կու տայ մեզի ա-
րուեստագէտը դասելու Լիսդի, Շոբէնի,
Չերնիի և ուրիշներու կարգին: Ու ասի-
կա՝ առանց չափազանց ըլլալու, քանի
որ նախ Էլմաս բախտը ունեցած է հան-
ճարեղ Լիսդի աշակերտն ըլլալու: Եւ աշա-
կերտ է ան՝ քիչ մըն ալ իր գործերուն
մէջ (Sonates): Գալով Շոբէնի, ասիկա
գիտցած է Էլմասի ալ սրտին իր հետքն
զօրաւոր կէտեր ձգել: Հասկնալի է ասի-
կա, քանի Էլմասի նկարագիրը ունի ար-
դէն շոբէնեան խառնուածք: Երբ աւել-
ցուի ասոր վրայ ընդհանրապէս հայկա-

կան մեղամաղձոտ թեւը, որու կը հանդիպինք արդէն ամէն Հայու, կու գանք այն հետեւութեան՝ որ էլմասը Շորէնի կը մօտեցնէ:

Ընդհանուր ամամբ մեզմ է էլմասի *Musique*. ան չունի ոտնէ ոտ շարժումը, որ յատկանշական է ժամանակակից երաժշտութեան մէջ: Ասոր փոխարէն ան կը բերէ հանգաւոր լըջութիւն մը, որ սակայն երբեմն չ'ալիկոծի երևակայութեան երթալու մղձաւանջէն: Ուրեմն էլմաս իրապաշտ է իտէալական ոճով, Ասոնք՝ այս երկու գիծերը՝ (իրապաշտութիւն և իտէալ) յատկանշիչներ էլմասեան երաժշտութեան:

Ստեփան էլմաս կու գայ մեզի ուրիշ կալուածի մը մէջ ալ՝ փայլուն և յաջողած: Ան կու տայ իր *Étude*ները, վեց հատ, նուիրուած մեծ վարպետին՝ Ֆրանց Լիստի: Հոս պատկեր կ'առնէ մեր աչքին դաշնակահար էլմասը, որու մատներուն դերքիք ճարտարութիւնը խօսքի կ'ելլէ նոթերուն մէջ: Արդարեւ էլմաս զրած է իր *Étude*ները և զանոնք նուագած ալ՝ նուագահանդէսներու մէջ:

Երբ ըսեմ, թէ էլմաս այդ կալուածին մէջ մեզի Չերնին կը յիշեցնէ, պէտք չէ կարծել, որ այս վերջինին ազդեցութիւնը զօրաւոր եղած ըլլայ հայ արուեստագէտին վրայ: Քանի որ՝ նոյնիսկ *Étude*ները ունին երգի մը չ'փոթող թեւը, որ էլմասեան է միշտ:

Ամփոփելով՝ ժնեի հայ արուեստագէտը կ'երեւայ մեզի դիւրի մը մէջ՝ որ պատիւ կը բերէ ոչ թէ միայն մեր ազգին, այլ նաեւ միջազգային երաժշտութեան:

Լայսեկ

ՅԱՆՈՐ ԳՐԻԳՈՐ

Յ. Գ. Վարը կու տամ Ստեփան էլմասի երկերուն ամբողջական ցանկը.

Դաշնակի երկու ձեռքի համար

1. Andante cantabile e Rondo pastorale . . . 5*
2. Arabesque 3
3. Aubade II 3
4. Ballade N° 1 4

5. Ballade 4
6. Barcarolle N° 1, N° 2 3-4
7. Berceuse N° 1, N° 2 3-4
8. Boléro N° 1, N° 2 3-4
9. Chanson II 4
10. Chant, Chant II 3-4
11. Complainte 3-4



Նըզահան Ստեփան էլմաս

12. Danse mélodique N° 4, N° 5 3-5
13. Egloue 4
14. Étude N° 1-6 6
15. Fantaisie 4
16. Fantaisie-Mazurka 4-5
17. Impromptu N° 1 5
18. Impromptu-Mazurke 4-5
19. Konzert N° 1 G Moll 5
20. Konzert N° 2 D Moll 6
21. Konzert N° 2 E Moll 5
22. Mazurka N° 1-2, N° 3-5, N° 14-17, N° 18-19, N° 20-11, N° 22-24, N° 25-27 3-4
23. Marche funèbre 2-3
24. Nooturne N° 1, N° 2, N° 6, N° 7 3-5
25. Polonaise-Fantaisie 4-5
26. Polonaise N° 2, N° 3, N° 4, N° 5, N° 6 4-5
27. Präludium N° 1-3, N° 4-6, N° 16-18, N° 19-21, N° 22-25 3-4
28. Rondo 4-5

29. Scherzo № 1, № 2 4-5
 30. Sonate № 1, № 2, № 3, № 4 4-5*
 31. Sonnet 4
 32. Stances 8
 33. Tarantelles 3-4
 34. Valse № 1, № 4 3-4
 35. Valse grande № 5, № 6 4-5
 36. Valse № 7, № 8, № 9 4-5

43. Muzurka № 8-9
 44. Mazurka № 10-11
 45. Nocturne № 4
 46. Nocturne № 5
 47. Präludium № 7-12
 48. Grande valse
 49. Aubade
 50. Chanson
 51. Chant
 52. Deux Mazurkas № 6-7
 53. Deux Mazurkas № 12-18
 54. Impromptu № 2
 55. Präludium № 13-14-15
 56. 1ère Polonaise
 57. Danse mélodique № 2
 58. Danse mélodique № 3

(Աղագրիչը բուսանդաները ցոյց կու տան
 դժուարութեան աստիճանը՝ հետեւեալ հա-
 մեմատութեամբ. 1-2 դիրիճ, 3-4 կես —
 դժուար, 5-6 դժուար):

Երկու դաշնակ՝ չորս ձեռքի համար

(Օրգանադի համար գրուած, և անկէ՝
 դաշնակի մասը)

37. Konzert № 1, G Moll 5*
 38. Konzert № 2, D Moll 6
 39. Konzert № 3, E Moll 5
 40. Andante cantabile (G Dur) e Rondo pa-
 storale (E Dur) 5
 41. Klaviertrio B Dur (Klavier, Violine und
 Violoncello) 5

Բոլոր այս յիշուած գործերը հրատա-
 րակուած են լայքցիկ, Edition Stein-
 grüber. Իսկ մօտ ատենէն նոյն մեծ տպա-
 րանէն լոյս կը տեսնեն հետեւեալները.

42. Ballade № 2
 43. Danse mélodique

Իսկ Բարիզ հրատարակուած են հե-
 տեւանքերը.

59. Elégie
 60. Idelle
 61. Ode
 62. Romance
 63. Sonnet
 64. Stances

Աւելորդ չ'ըլլար յիշելը, որ յարգելի
 արուեստագէտը ազնիւ Հայու իր սրտով,
 Երեւանի մեր երաժշտանոցին իր երկերէն
 երկ-երկերու օրինակ նուիրեց վերջերս*.
 Յ. Գ.

* Նախածանոթեամբ Պ. Յակոբ Գրիգորի. — Ե. Խ.

ՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԿՕՄՊՕԶԻՏՈՐՆԵՐ

(20-րդ դար)

Ե Յ Ե Ե Ե Ե

(Շարունակութիւն տես Բազմավէպ, 1925 էջ 311)

VII. Ինչ է ներկայացնում Ռոմ. Մելիքեանի երգերի զգացմունքը.

Զգացմունքը դեռ գեղարուեստի մէջ Արուեստագէտի չափի գիտակցութեան
 շնորհքը կայանում է նրանում, որ նրա արտայայտած գոյներն ու զգացմունքները
 չեն լինում առօրեայ, այսինքն տափակ ու զորշ, նկատելի է, որ Պիոմ. Մելի-
 քեանը խուսափում է մերկացնել իր ապրումները, իր սիրտը, և ծածկում է մերթ
 տարաբախտ կենդանու, մերթ սրտաբեկ թռչունի, մերթ վշտահար մօր անւան
 տակ, Մի տեղ դուք տեսնում էք՝ նա մտնում է ժողովրդի մէջ, առնում վշտահար